

ՀԱՅ-ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ 1922-1936թթ.*

Նարեկ Մուրադյան

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, Անդրկովկասյան Դաշնություն, Կենտրոնացում, վիճելի տարածքներ, հանձնաժողով, սահմանային խնդիր, դեպատին

Անդրկովկասյան Դաշնության կազմավորումից հետո (1922թ. մարտ) խորհրդային նոր հանրապետությունների միջև տարածքների և սահմանների ճշգրտման հարցում առաջացան լուրջ խնդիրներ: Դրանք կարգավորելու նպատակով ստեղծվեցին հողային հանձնաժողովներ, որոնք ենթակա էին Անդրկովկասյան Դաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեին (Կենտգործկոմ): Վիճելի սահմանները կարգավորելու նպատակով ստեղծվել էին նաև տեղական հանձնաժողովներ, որոնց մեջ մտնում էին հանրապետություններից մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև Անդրկենտգործկոմի կողմից նշանակված անդամ: Վերջիններս միշտ հաշվետու էին Անդրկովկասի նախագահությանը, որը պարբերաբար քննարկում և հաստատում էր նիստերի արձանագրությունները[1]: Տարածքային-սահմանային հիմնական վեճերը Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև էին, որոնք երբեմն վերաճում էին ընդհարումների: Այս ամենին վերջ տալու նպատակով 1922թ. մայիսի 8-ին Անդրդաշնության Միութենական խորհուրդը կազմեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանային վեճերը կարգավորող հանձնաժողով: 1923թ. փետրվարի 5-ին Անդրկենտգործկոմի նախագահությունն ստեղծեց հողային վեճերը կարգավորող կենտրոնական հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց ՀՍԽՀ ԿԶԿ-ի նախագահ Սաքո Համբարձումյանը, որին նույն թվականի մայիսի 14-ին փոխարինեց Սարգիս Կասյանը[2]: Նույն թվականի փետրվարի 10-ի նիստում որոշվեց հանրապետությունների ներքին գործերի հողժողկոմատներին առաջարկել մինչև 1923թ. նոյեմբերի 25-ը վիճելի գավառներից երկուական ներկայացուցիչ ընտրել, որոնք առաջին անհրաժեշտության դեպքում կգործուղվեն Թիֆլիս վիճելի հարցերը կարգավորող հանձնաժողովում աշխատելու համար[3]: 1924թ. հունվարի 30-ի նիստով որոշվեց վերը նշված հանձնաժողովը անվանել Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողով[4]:

Այս բոլոր հանձնաժողովները կանգնած էին լուրջ խնդիրների առջև, քանի որ, ինչպես արդեն նշել էինք, Անդրկովկասում սահմանային-տարածքային խնդիրները երբեք հանրապետությունների միջև միշտ էլ ուղեկցվել են միմյանց դեմ բախումներով: Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային-սահմանային վեճեր գոյություն ունեին Անդրկովկասյան դաշնության ստեղծումից էլ առաջ և շարունակվեցին մինչև Անդրկովկասյան դաշնության լուծարումը՝ 1936թ.:

1922թ. սկսած՝ Հայաստանի և Ադրբեջանի՝ համապատասխանաբար Դիլիջանի և Դազախի գավառների միջև սահմանային վեճերը հայկական և մուսուլմանական Թաթլու[5], Չախմախլի և Լալիգեղ[6] (Լալաքենդ) գյուղերի, Կոթի[7] ու Դաշսազլի գյուղերի միջև «Կարաչալ» տեղամասի համար՝ 304 դեպատին (1 դեպատինը հավասար է 1.09 հեկտարի) տարածքով, Կոդբ և Շիխլի գյուղերի միջև «Չամչա» տեղամասի համար՝ 940 դեպատին տարածքով, Դովեղ և Քյամարլի գյուղերի միջև «Բաղման-ջալախ»

* Հոդվածն ընդունվել է 30.01.2017: Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆ. Է.Գ.Մինասյանը:

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կոչվող տեղամասի նկատմամբ, Բարանախ[8] և Ղայմախլի գյուղերի միջև «Աջի» տեղամասի համար՝ 1002 դեպյատին տարածքով[9]:

Արխիվային վավերագրերում պահպանվել են հստակ նյութեր վեճերի առարկա տարածքների և դրանց հետագա հետագա ընթացքի մասին: Թաթու գյուղում վեճն առաջացել էր 1923թ. ապրիլին: Մուսուլման գյուղացիները գրավել էին հայերին պատկանող հողերը և հայկական կողմը պահանջում էր հետ վերադարձնել դրանք: Սահմանային հարցերը կարգավորող հանձնաժողովը որոշեց հնարավորություն տալ մուսուլմաններին օգտագործելու հողը մինչև բերքահավաքի ավարտը, որից հետո հողը պետք է վերադարձվեր հայերին[10]:

Հաջորդ վիճելի խնդիրը հայկական Լալիգեղ և ադրբեջանական Չախմախլի գյուղերին հարակից 69 դեպյատին տարածքն էր: Հարցը քննարկվեց 1924թ. դեկտեմբերի 24-ին Անդրդաշնության հանրապետությունների հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը կարգավորող հանձնաժողովի նիստում: Որոշվեց հաստատել 1924թ. նոյեմբերի 8-ի տեղական հանձնաժողովի եզրակացությունը՝ ըստ որի 69 դեպյատին տարածքը հանձնել Լալաքենդին, քանի որ այն փաստացի օգտագործում էին այդ գյուղի բնակիչները[11]:

Կոթի և Ղաշսազի գյուղերի միջև վեճի առարկան Կարաչալ տեղամասն էր: Բանն այն է, որ հայ-թաթարական բախումների ժամանակ Կոթի գյուղն այրվել էր, իսկ բնակիչները թողել էին գյուղը և բնակություն հաստատել սարերում: Խորհրդային իշխանության հաստատումից հետո կոթեցիները վերադարձել էին և պահանջում էին տեղամասը հանձնել իրենց, քանի որ գյուղը սակավահող էր, և մի քանի տասնամյակ նրանք փաստացի օգտագործել էին այդ տեղամասը: Նույնպիսի պահանջ ներկայացրել էին նաև դաշսազիցիները: 1923թ. փետրվարի 23-ին Անդրկենտրոնական սահմանային գավառների միջև վեճերը կարգավորող հանձնաժողովի նիստում որոշվեց վիճելի տեղամասը հանձնել քիչ հող ունեցող գյուղին, ուստի անհրաժեշտ էր տեղում հետաքննություն անցկացնել որոշելու համար վիճելի գավառների հողային պատկանելությունը: Հարցի լուծման համար այնտեղ մեկնեցին Քարվանսարայի և Ղազախի գործկոմների ներկայացուցիչները տեղում հետաքննություն անցկացնելու համար, որից հետո պետք է Կոթի և Ղաշսազի գյուղերի բնակիչներին փոխանցել այն տարածքները, որոնք նրանք օգտագործում էին մինչև Կոթի գյուղի այրվելը[12]: Մինչև հարցին վերջնական լուծում տալը՝ որոշվեց վիճելի տեղամասը զրեթե հավասարապես բաժանել գյուղացիների միջև[13]: 1923թ. հունիսի 9-ին Անդրկենտրոնական նախագահության նիստում որոշվեց Կարաչալ տեղամասը բաժանել երկու մասի. հարավային փոքր հատվածը անցնելու էր Ղաշսազի գյուղին, իսկ հյուսիսային մեծ հատվածը պետք է անցներ սակավահող Կոթի գյուղին[14]:

Հայկական Կողբ և ադրբեջանական Շիխլի գյուղերի միջև վեճը քննարկվեց 1923թ. հոկտեմբերի 18-ին: Այստեղ որոշվեց վիճելի «Չամչա» տեղամասը տալ շիխլիցիներին: Հայկական ԿԳԿ-ն չընդունեց այս որոշումը և խնդրեց այն վերանայել, քանի որ պարզվել էր որ շիխլիցիների տարածքները համեմատաբար ավելի շատ են: Հարցը քննարկվեց նաև 1924թ. մարտի 17-ի Անդրդաշնության ԿԳԿ նախագահության նիստում: Այստեղ հանձնաժողովը որոշեց ևս մեկ անգամ վերանայել հարցը, որի արդյունքում մարտի 28-ին առաջարկեց Հայաստանի և Ադրբեջանի կենտրոնական Անդրդաշնության կենտրոնական անհապաղ ներկայացնել մանրամասն տեղեկություն հողի քանակի, ինչպես նաև բնակչության թվաքանակի վերաբերյալ: Ի վերջո, 1924թ. հոկտեմբերի 27-ին հողահանձնաժողովի կայացած նիստում որոշվեց տեղամասը հանձնել Կողբին[16]: Այս որոշումը հաստատվեց նաև 1924թ. դեկտեմբերի 24-ի Անդրկենտ-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

գործկոմի հողահանձնաժողովի նիստում[17]:

Դովեղ և Քյամարլի գյուղերի միջև վեճն ընթանում էր Բաղման-ջալախ կոչվող տեղամասի 3894 դեյաստին տարածքի շուրջ: Այստեղ, հուրախություն հայկական կողմի, 1923թ. սեպտեմբերի 18-ին Յաղուբովի գլխավորած հանձնաժողովը վեճը լուծեց հոգուտ Դովեղ գյուղի[18]: Այս որոշումը, բնականաբար, դժգոհություն առաջացրեց քյամարլեցիների մեջ, և նրանք բռնագրավեցին այդ տարածքը, սկսեցին անտառահատել այն խոչընդոտելով Դովեղի բնակչության մուտքը այնտեղ[19]: Այստեղ կարևոր ենք համարում նշել, որ այս խնդրի վերաբերյալ ադրբեջանական պատմագիտությունը հակառակ պատկերն է ներկայացնում: Ադրբեջանցի պատմաբան Իլգար Նիֆթալիևը նշում է, որ 1923թ. սեպտեմբերի 23-ի նիստով Բաղման-ջալախ տեղամասը հանձնվել է Քյամարլի գյուղին, որից հետո 1925թ. Անդրկենտրոնի որոշմամբ տեղամասը հավասարապես բաժանվել է կողմերի միջև[20]: Նա պարզապես փորձել է թաքցնել Քյամարլի գյուղի բնակիչների բռնագրավումների փաստը, քանի որ այս դեպքում նրանք դժգոհելու պատճառ չէին ունենա, և հետևապես կբացառվեր նաև նրանց կողմից բռնագրավումների անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է Աջի տեղամասի նկատմամբ հայկական Բարանա և ադրբեջանական Ղայնախլի գյուղերի միջև վեճին, այստեղ հողահանձնաժողովի 1924թ. մարտի 28-ի նիստում որոշվեց մինչև հարցին վերջնական լուծում տալը տեղամասը թողնել երկու կողմերի համատեղ օգտագործմանը՝ առաջարկելով Հայաստանի և Ադրբեջանի հողժողովուհներին տեղամասը բաժանել երկու հավասար մասերի[21]: Հարցը վերջնական լուծումը ստացավ 1924թ. հոկտեմբերի 31-ին կայացած Անդրկենտրոնի հողահանձնաժողովի նիստում, որտեղ հաստատվեց տեղամասը բաժանելու Կոչետկովի առաջարկը. հյուսիսարևելյան մասը՝ 612 դեյաստին տարածքով, հանձնվեց Ադրբեջանի Ղայնախլի, իսկ հարավարևմտյանը՝ 390 դեյաստին տարածքով, Հայաստանի Բարանա գյուղին[22]:

Դիլիջանի և Ղազախի գավառների միջև վեճ գոյություն ուներ համապատասխանաբար Մոստսքենդ[23] և Ալիբեգլի գյուղերի միջև 228 դեյաստին տարածքի համար: Այս խնդրի վերաբերյալ Անդրկենտրոնի հողահանձնաժողովը 1924թ. դեկտեմբերի 24-ի նիստում որոշեց վիճելի տարածքը ամբողջությամբ թողնել Մոստսքենդ գյուղին[24]: Այս նիստում կարգավորվեցին նաև մի շարք այլ սահմանային հարցեր: Այսպես՝ նույն Ալիբեգլի գյուղի և Դիլիջանի գավառի Ղզլբուլախ[25] գյուղի միջև վեճ էր ընթանում 68 դեյաստին տարածքի պատկանելության շուրջ: Միստում որոշվեց տարածքը գրեթե ամբողջապես (67 դեյաստին) հանձնել Ղզլբուլախ գյուղին, իսկ մնացած մասը՝ Ալիբեգլի գյուղին[26]:

Մյուս վիճելի խնդիրը չորս հողակտորների վերաբերյալ էր, ընդհանուր 470 դեյաստին տարածքով, որոնք կրում էին մեկ ընդհանուր՝ Գյունաշ անունը: Վեճն ընթանում էր Ղազախի գավառի Ալիբեգլի և Գաջալի գյուղերի և Դիլիջանի գավառի Նորաշեն գյուղի միջև: Հողահանձնաժողովը որոշեց առաջին հողակտորը (30 դեյաստին) ամբողջությամբ թողնել Ալիբեգլի, երկրորդը (14 դեյաստին)՝ Գաջալիին, իսկ երրորդը (192 դեյաստին) և չորրորդը (234 դեյաստին) բաժանել վիճելի գյուղերի միջև[27]:

Անդրկովկասյան դաշնության գոյության հետագա տարիներին Հայաստանի և Ադրբեջանի միջև վեճերը ոչ միայն չդադարեցին, այլև շարունակվեցին ավելի բուռն կերպով: Այսպես՝ Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների 1925թ. հունվարի 2-ի զեկուցագրի համաձայն՝ Հայաստանը և Ադրբեջանը սահմանային վեճեր ունեին Դիլիջան-Ղազախ, և Զանգեզուր-Քրդաստան գավառների միջև: Վեճերն ընթանում էին Շնող-Այրումի շրջանի, Մեղրու 3 գյուղերի (Նյուվադի, Էյնաժոր և Թղուտ), Կապանի 21

գյուղերի միջև, ինչպես նաև Դարալագյազ-Քուրդիստան սահմանային 12000 դեյաստին տարածքի համար, որը գտնվում էր «Արագեյար» արոտավայրերի շրջանում: Այստեղ վեճը ծագել էր 1923թ.՝ այն բանից հետո, երբ հայկական կողմը առաջարկել էր այդ հատվածը միացնել Նոր-Բայազետի գավառին՝ հիմնավորելով վարչական կառավարման նպատակահարմարությամբ: Հարցը քննարկվել է նույն թվականի հունվարի 11-ի հողհանձնաժողովի նիստում: Հարցի շուրջ կողմերը վերջնական համաձայնության չեկան և որոշվեց Հայաստանի ու Ադրբեջանի ԿԳԿ- ներին տալ երկու շաբաթ ժամկետ, սակայն այդ ընթացքում ԿԳԿ-ները ոչ մի առաջարկ չներկայացրին և միայն 1929թ. փետրվարի 18-ի նիստում տարածքը հանձնվեց Ադրբեջանին[28]: 1930թ. դեկտեմբերի 17-ին ՀՍԽՀ կենտրոնական փոքր նախագահության նիստում կրկին քննարկվեց հող-ժողկոմատի դիմումը Անդրկենտրոնի վերաբնեւելու Անդրկովկասյան հատուկ հանձնաժողովի որոշումը Արագեյար արոտավայրի մասին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Անդրկովկասյան հատուկ հանձնաժողովի կողմից հարկ եղած սահմանագծումները արդեն կատարված են՝ հարցը համարվեց լուծված[29]:

Անդրֆեդերացիայի կազմում գտնվելու ընթացքում ՀՍԽՀ Դիլիջանի և ԱՍԽՀ Ղազախի գավառների միջև վեճը Շնող-Այրում շրջանի նկատմամբ էր 15.659 դեյաստին տարածքով: Վիճելի տարածքից 6751 դեյաստինը անտառներ էին, 3621-ը՝ ամառային արոտավայրեր, իսկ մնացածը՝ անասնապահական ձմեռանոցներ և գյուղատնտեսության համար նպաստավոր հողատարածքներ: Վեճի լուծման նպատակով 1923թ. ապրիլին Դիլիջանի և Ղազախի գավառների վարչատնտեսական սահմանագծում անցկացվեց, որը հաստատվեց Անդրկենտրոնի կազմում գտնվող գավառների հողային վեճերը որոշող հանձնաժողովի 1923թ. ապրիլի 28-ի նիստում[30]: Սահմանն անցնելու էր այնպես, որ Կալաչա[31], Դուվաղ, Կուրումսյուլ[32], Կոթիքենդ[33], Կոչկուտան, Բաղանիս-Այրում գյուղերը մնան Դիլիջանի կազմում[34]: Ըստ այդ որոշման՝ Շնող-Այրումի շրջանի 5000 դեյաստին հողատարածքը ՀՍԽՀ Դիլիջանի գավառից հանձնվեց ԱՍԽՀ Ղազախի գավառին[35]: 1923թ. մայիսի 14-ին ստեղծվեց նաև Դիլիջանի և Ղազախի գավառների միջև վեճերը որոշող հատուկ տեղական հանձնաժողով Ս. Յաղուբովի գլխավորությամբ: Հանձնաժողովին հանձնարարված էր քննել և երկու շաբաթվա ընթացքում Կենտրոնի կողմից նույնպես վիճելի հարցերի վերաբերյալ որոշումները[36]: Հարցը, սակայն, այսքանով չավարտվեց, քանի որ հետագայում պարզվեց, որ 1923-1924 թթ. Ղազախի հողաշինարարական խմբի կազմած հատակագիծը հիմնված չէր 1923թ. ապրիլի 28-ի որոշման վրա: Այլ կերպ ասած՝ Խորհրդային Ադրբեջանը, խախտելով նշված որոշումը, ապօրինաբար տիրացել էր ավելի մեծ՝ մոտավորապես 11.800 դեյաստին հողատարածքի[37]: Խնդիրը կարգավորելու նպատակով 1925թ. հունիսին տարածաշրջան գործուղվեցին հողհանձնաժողովի աշխատակիցներ Յա. Կոչետկովը և Վ. Չխենկելին, իսկ օգոստոսին՝ անտառային տեղամասերի հատուկ փորձագետներ[38]: Քանի որ բռնագրավումները շարունակվում էին հայկական կողմը 1925թ. սեպտեմբերի 21-ին դիմեց Անդրկենտրոնի կողմից առաջարկելով արտակարգ լիազորություններով հանձնաժողով ստեղծել և տեղում քննություն կատարել Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ, իսկ հանցավորներին պատասխանատվության ենթարկել և մինչև սահմանագծումը դադարեցնել հողաշինարարությունը Շնող-Այրումի շրջանում՝ 1923թ. ապրիլի 28-ին գծված սահմանից դուրս[39]: Քննություն կատարելուց հետո հանձնաժողովը Անդրկենտրոնի գեկուցման մեջ նշում է, որ 1923թ. ապրիլի 28-ի որոշմամբ Ադրբեջանի և Հայաստանի միջև տարածքների փոխանակություն պետք է կատարվեր: Այլ կերպ ասած՝ հայկական կողմն առաջարկում էր 4000 դեյաստինի դիմաց նույնքան տարածքով և բնակչության թվով համարժեք տարածք Բաշքենդի շրջակայքում[40]: Հայկա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

կան կողմի կարծիքով՝ այս առաջարկի իրագործմանը ոչուրի՛ն կդառնար վարչական կառավարումը այդ շրջաններում: Մոտ երկու ամիս անց՝ 1925թ. նոյեմբերի 2-ին, այս հարցը քննարկվեց Անդրկենտրոնական հողահանձնաժողովի նիստում: Ուսումնասիրելով առկա նյութերը՝ հողահանձնաժողովը որոշեց, որ խնդրի վերջնական լուծման համար շուտափույթ նիստ հրավիրել երկու հանրապետությունների հողժողովուհների մասնակցությամբ: 1925թ. դեկտեմբերի 10-ին, 12-ին, 15-ին և 25-ին կայացած նիստերին, սակայն, Ադրբեջանի ներկայացուցիչները չներկայացան: Երկու տարի անց միայն՝ 1927թ. հունվարի 11-ին, ԱՍԽՀ հողժողովում Դ. Բունիաթգադեն ներկայացավ Կասպանի գլխավորությամբ տեղի ունեցած Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողովի և Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստերին, որոնց ՀՍԽՀ-ի կողմից մասնակցում էր հողժողովում Ա. Երզնկյանը[41]: Թվում էր, թե այս նիստում վեճը ի վերջո իր հանգուցալուծումը կստանա, սակայն երկու կողմերի անհամաձայնության պատճառով կրկին ձախողվեց[42]: Միայն 1929թ. փետրվարի 18-ին Անդրկենտրոնական նախագահությունը որոշեց 11659 դեսյատին հանձնել Ղազախի գավառին, իսկ 4000 դեսյատին՝ Դիլիջանի գավառին[43]:

Փաստորեն հայկական կողմը, կուլ գնալով ադրբեջանցիների բռնի գործողություններին, կորցրեց ևս մեկ տեղամաս, և, ի տարբերություն անդրբեջանցիների, համակերպվեց դրան:

1929թ. փետրվարի 18-ի Անդրկենտրոնական նախագահության նիստում քննարկվեց նաև դաշնության մեջ մտնող հանրապետությունների սահմանային գավառների միջև հողային և անտառային վեճերի մի շարք այլ հարցեր: Զանգեզուր-Մեղրի-Զեբրայիլի հատվածում վեճի առարկան 16000 դեսյատին տարածքն էր, որն ի հայտ էր եկել դեռևս 1926թ.: Հարցը Բունիաթգադեի և Երզնկյանի ներկայությամբ քննարկվելուց հետո որոշվեց ամբողջ հարավային հատվածում գտնվող Նյուվադի, Էյնաձոր և Թղուտ գյուղերը (մոտավորապես 9000 դեսյատին տարածքով) փոխանցել Հայաստանի Մեղրիի գավառին[44]: Իսկ Ողջի և Բասուտ գետերի ավազանում գտնվող 21 գյուղերը փոխանցվեցին Ադրբեջանի Զեբրայիլի գավառին: Որոշվեց նաև ՀՍԽՀ կազմում թողնել Նախիջևանի հավակնության առարկա Կարձևան, Կուրտ-Կուլագ, Ղորադիս[45], Օդբին, Ագխաչ[46], Դադին-Ալմալու, Ալմալու, Իտկրան և Սուլթանբեկ[47] գյուղերը[48]: Մեղրու գավառի Կարձևան և Օրդուբադի գավառի Քիլիս գյուղերի վիճելի հողամասը գրեթե հավասարապես բաժանվեց երկու գյուղերի միջև՝ արևմտյան հատվածը (մոտավորապես 455,5 դեսյատին) անցավ Քիլիս գյուղին, իսկ արևելյանը՝ (522 դեսյատին) Կարձևան գյուղին[49]: Մեղրու և Օրդուբադի գավառների միջև վեճ էր ընթանում նաև Ծիրանիձոր արոտավայրի վերաբերյալ: 1925 թ. դեկտեմբերի 13-ին հողժողովումստի որոշմամբ մինչև հարցի վերջնական լուծումը թույլատրվեց կարձևանցիներին երկու անգամ ավելի ոչխար արածեցնել: Այս որոշումը ուժի մեջ էր մնալու մինչև հարցի վերջնական լուծումը[50]:

1930-ական թվականներին Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև վիճելի տարածքներին ավելացավ նաև Իջևանի Բաղանիս և Ղազախի շրջանների Բաղանիս-Այրում գյուղերի միջև գտնվող Թարաքյամազարի հողակտորը: Ստեղծվեց Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ կենտրոնականների միացյալ հանձնաժողով, որը 1937թ. սեպտեմբերի 13-ին որոշեց վիճահարույց 30 հա տարածքը հանձնել Իջևանի Բաղանիս գյուղին, իսկ Իջևանի շրջանի ամառային արոտավայրերից 120 հա տրամադրել Ղազախի Բաղանիս-Այրում գյուղի օգտագործմանը: ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահության 1937թ. հոկտեմբերի 16-ի նիստը հաստատեց այս որոշումը, իսկ երկու հանրապետությունների հողժողովուհներին հանձնարարվեց 10 օրվա ընթացքում իրականացնել դա[51]:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

1930-ական թվականների սկզբներին ՀՍԽՀ Շամշադինի և ԱՍԽՀ Չետաբեկի շրջանների միջև գտնվող անտառային տարածքի նկատմամբ ադրբեջանական կողմը հավակնություններ էր ներկայացրել: Այս անգամ, սակայն, նրանց նկրտումներն ի դերն ելան: Անդրդաշնության ԿԳԿ-ն, հուրախություն հայկական կողմի, 1930թ. տարածքը համարվեց ՀՍԽՀ մաս, որը ամրագրվեց 1932թ. հրատարակված պետական քարտեզում: Ադրբեջանական կողմը, սակայն, համառորեն շարունակում էր հավակնությունները: Այս առումով, իհարկե, անհրաժեշտ է արժանին մատուցել ադրբեջանական իշխանություններին, որոնք, ի տարբերություն հայերի, ամեն կերպ պայքարում էին ցանկացած հողակտորի համար՝ կանգ չառնելով ոչ մի խոչընդոտի առջև: Այսպես՝ ադրբեջանցիների համառության հետևանքով 1936թ. հունիսին երկու կողմերի միջև կրկին հանձնաժողով կազմվեց, որի խնդիրն էր տեղում քննել Շամշադինի և Չետաբեկի շրջանների միջև առկա վեճը: Սակայն այս անգամ էլ նրանց փորձերը ծախողվեցին, քանի որ որոշվեց շրջանների սահմանաբաժանման համար հիմք ընդունել 1930թ. Անդրդաշնության ԿԳԿ-ի որոշումը[52]:

1930 թ. սեպտեմբերի 22-ին Ղաշնության ԿԳԿ-ի նախագահությունը որոշում ընդունեց Անդրկենտրոնական կից գործող Հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովը լուծարելու մասին, և դրա հիման վրա սեպտեմբերի 30-ին Կենտրոնական կողմի փոքր նախագահությունը որոշեց հանձնաժողովի լուծարման կարգը: Այդ որոշման համաձայն՝ լուծարված հանձնաժողովի բոլոր գործերը ինչպես ավարտված, այնպես էլ առկախ մնացած, փոխանցվեց Անդրդաշնության հողագործության ժողկոմատին[53]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Սահակյան Ա., Հայաստանը Անդրկովկասյան Ղաշնության կազմում: Խանդավառ միավորումից մինչև անադնուկ բաժանում, Վանաձ., 2013, էջ 176:
2. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ, 112, ց. 1, գ95, թ. 115:
3. Վրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ), ֆ, 607, ց. 1, գ. 68, թ. 1:
4. Տե՛ս Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Б., 2010, стр.183
5. Թաթևու՝ այժմ Պառավաբար, ՀՀ Շամշադինի շրջանում, տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Դ-Կ, Եր., 1988, էջ 391:
6. Լալիգեղ՝ այժմ Վազաշեն, ՀՀ Իջևանի շրջանում, տե՛ս նույն տեղում, էջ 556:
7. Կոթի՝ այժմ Շավարշավան, ՀՀ Նոյեմբերյանի շրջանում, տե՛ս նույն տեղում, հ. 3, Կ-Ն, Եր., 1991, էջ 187:
8. Բարանա՝ այժմ Նոյեմբերյան, ՀՀ Նոյեմբերյանի շրջանի վարչական կենտրոնը, տե՛ս հ. 4, Ն-Վ, Եր., 1998, էջ 11:
9. ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ 168, թ 26 և շրջ.:
10. ՀԱԱ, ֆ 112, ց2, գ3, թ., 131:
11. ՀԱԱ, ֆ. 112, ց. 8, գ. 44, թ. 230:
12. ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 3, թ. 131 և շրջ:
13. ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 68, թ. 2:
14. ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 77, թ. 6:
15. ՀԱԱ, ֆ. 112, ց.1, գ. 168, թ. 38 և շրջ:
16. Տե՛ս Нифталиев И., նշվ. աշխ., էջ 187:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

17. ՀԱԱ, ֆ. 112, ց. 8, գ. 44, թ. 234:
18. ՀԱԱ, ֆ. 112, ց8, գ. 44, թ. 234:
19. ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 168, թ. 39, գ. 143, թ. 95 և շրջ:
20. Տե՛ս Нифталиев И., նշվ. աշխ., էջ 188:
21. ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 78, թ. 16:
22. ՎԱԱ, ֆ. 607, ց 1, գ. 78, թ. 50:
23. Մոսեսքենդ՝ այժմ Մոսեսգեղ, ՀՀ Շամշադինի շրջանում, տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, Կ-Ն, էջ 866:
24. ՀԱԱ, ֆ. 112, ց. 8, գ. 44, թ. 230 և շրջ:
25. Ղզլբուլախ՝ այժմ Կարմիրաղբյուր, ՀՀ Շամշադինի շրջանում, տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, էջ 561:
26. ՀԱԱ, ֆ. 112, ց. 8, գ. 44, թ. 231:
27. ՀԱԱ, ֆ. 112, ց. 8, գ. 44, թ. 231-232:
28. ՀԱԱ, ֆ. 112, ց.2, գ. 1407, թ. 172:
29. ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 551, թ. 7:
30. ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 551, թ. 7:
31. Կալաչա՝ գյուղ Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառում: Այժմ՝ Բերդավան, ՀՀ Նոյեմբերյանի շրջանում, տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Դ-Կ, էջ 891:
32. Կուրումպլու՝ այժմ Բարեկամավան, ՀՀ Նոյեմբերյանի շրջանում, նույն տեղում, հ. 3, էջ 295:
33. Կոթիքենդ՝ այժմ Շավարշավան, ՀՀ Նոյեմբերյանի շրջանում, նույն տեղում էջ 181:
34. ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 68, թ. 8, գ. 70, թ. 4:
35. ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ 703, թ. 195, ֆ. 112, ց. 2, գ. 31, թ. 36:
36. ՀԱԱ, ֆ. 112, ց.1, գ. 95, թ. 131:
37. ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 31, թ. 36:
38. ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ 195:
39. ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 31, թ 32-37:
40. Տե՛ս Нифталиев И., նշվ. աշխ., էջ 188:
41. ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 195-196:
42. ՀԱԱ, ֆ. 113, ց. 43, գ. 568. թ. 3:
43. ՀԱԱ, ֆ 112, ց. 2, գ. 1405, թ 171:
44. ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 196:
45. Ղորադիս՝ գյուղ Երևանի նահանգի Շարուր-Ղարալազյազի գավառում: Այժմ՝ Հորադիս, ՀՀ Վայքի շրջանում, տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, էջ, 577:
46. Ագխաչ՝ այժմ Արտավան, ՀՀ Վայքի շրջանում, նույն տեղում, հ. 1, էջ 23:
47. Սուլթանբեկ՝ այժմ Բարձրունի, ՀՀ Վայքի շրջանում, նույն տեղում, հ. 4, էջ 701:
48. ՀԱԱ, ֆ. 112, ց. 2., գ. 1405, թ. 172 շրջ:
49. ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267. 78-79 շրջ:
50. ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 228, թ. 16 և շրջ:
51. ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 328, թ. 2:
52. ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 687, թ. 9, 13:
53. ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 240, թ. 2:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Հայ-Ադրբեջանական սահմանային վեճերը 1922-1936թթ
Նարեկ Մուրադյան

Անդրկովկասյան Ղաշնության տարիներին, փաստորեն, Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջև հողային վեճերը հիմնականում լուծվեցին հոգուտ Ադրբեջանի: Հայկական կողմը չցուցաբերեց բավարար վճռականություն և համառություն՝ իր կազմի մեջ պահելու վիճելի տարածքները, ինչպես դա անում էր ադրբեջանական կողմը: Օգտվելով Խորհրդային Հայաստանի ղեկավար շրջանակների վարած անհետևողական քաղաքականությունից՝ ադրբեջանական կողմը կարողացավ զգալի տարածքներ յուրացնել, ինչը, բնականաբար, ծանր հետևանքն էր ունենալու հետագա տարիներին՝ մասնավորապես Խորհրդային Հայաստանի իրավահաջորդ Հայաստանի երրորդ հանրապետության շրջանում:

РЕЗЮМЕ

Армяно-азербайджанские погранично-территориальные споры в 1922-1936гг.
Нарек Мурадян

Ключевые слова: Советская Армения, Закавказская Федерация, Центральный исполком, спорные участки, комиссия, пограничная проблема, десятины.

В годы Закавказской Федерации территориальные споры между Советской Арменией и Советским Азербайджаном были решены в основном в пользу Азербайджана. Армянская сторона не проявила необходимого упорства и настойчивости, чтобы удержать спорные территории. Используя непоследовательную политику, которую вели правящие круги Советской Армении, азербайджанская сторона смогла захватить значительные территории, что естественно повлечет за собой тяжелые последствия в последующие годы, в частности для третьей Республики Армении, которая является преемником Советской Армении.

SUMMARY

Armenian-Azerbaijani Regional Border Disputes in 1922-1936
Narek Muradyan

Keywords: Soviet Armenia, Transcaucasion Federation, Central executive committee, disputable territories, commission, border problem, tithes

During the period of Transcaucasian Federation the territorial issues which existed between the Soviet Armenia and the Soviet Azerbaijan had been solved in favour of Azerbaijan. The Armenian side didn't show sufficient determination and persistence for holding the disputable territories as Azerbaijani side did. The Azerbaijani side used the incoherent policy of the ruling circles of the Soviet Armenia and managed to salvage considerable territories which will have its heavy result in the future particularly for the successor of the Soviet Armenia the third Republic of Armenia.